ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» փետրվարի 2015թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը, հիմք ընդունելով Սիմոնյան կրթական հիմնադրամի գրությունը, ղեկավարվելով «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սիմոնյան կրթական հիմնադրամին /հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672/ Երևանի Հալաբյան փողոցի հ. 2 հասցեում Թումանյանի անվան զբոսայգու զբաղեցրած հողամասի մասով ընթացիկ տարվա համար տրամադրել հողի հարկի գծով արտոնություն՝ 2 287 734 /երկու միլիոն երկու հարյուր ութսունյոթ հազար յոթ հարյուր երեսունչորս/ դրամ գումարի չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի Թումանյանի անվան զբոսայգու զբաղեցրած հողամասն անհատույց օգտագործման իրավունքով պատկանում է Սիմոնյան կրթական հիմնադրամին /վկայական՝01.08.2014թ. հ.01082014-01-0166/: Հաշվի առնելով վերոնշյալ հասցեում Սիմոնյան կրթական հիմնադրամի կողմից այգին բարեկարգելու ու պահպանելու նպատակով իրականացված մեծածավալ աշխատանքը և ներդրված ֆինանսական միջոցները, Երևան քաղաքի ավագանու 11.02.2014թ. N 111-Ա որոշմամբ նշված կազմակերպությանը 2014 թվականի համար տրամադրվել էր հողի հարկի գծով արտոնություն:

16.01.2015թ. գրությամբ Սիմոնյան կթրական հիմնադրամի գլխավոր տնօրենը դիմել է Երևանի քաղաքապետին՝ հողի հարկի արտոնություն ստանալու խնդրանքով, ներկայացնելով ինչպես նախկինում, այնպես էլ 2014 թվականի ընթացքում հիմնադրամի կողմից այգու պահպանման և բարեկարգման համար իրականացված աշխատանքները և ծախսերը, նշելով, որ հիմնադրամը տվյալ տարածքում իրականացնում է բարեգործական կրթական ծրագիր, որը շահ ստանալու նպատակ չի հետապնդում:

Հալաբյան փողոցի հ.2 /նախկին հասցեն՝ Հալաբյան 16/ հասցեում հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով պատկանող՝ հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող հողամասի 2015 թվականի համար հաշվարկված հողի հարկի գծով հարկային պարտավորությունները կազմում է 2 287 734 /երկու միլիոն երկու հարյուր ութսունյոթ հազար յոթ հարյուր երեսունչորս/ դրամ:

Կարևորելով հանրության համար Սիմոնյան կրթական հիմնադրամի կողմից Երևանի Հալաբյան փողոցի հ.2 հասցեում գտնվող զբոսայգու բարեկարգման, այգու պահպանման ուղղությամբ կատարված մեծածավալ աշխատանքների, այդ տարածքում իրականացվող կրթական ծրագրերի դերն ու նշանակությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այգու տարածքում մինչ այժմ իրականացված բարեկարգումները որևէ կերպ չեն հետապնդում շահ ստանալու նպատակ, ինչպես նաև կարևորելով Թումանյանի անվան զբոսայգին մշտապես ըստ նշանակությամբ օգտագործելու և բարեկարգված պահելու անհրաժեշտությունը, առաջարկվում է հողի հարկի գծով արտոնություն տրամադրել Սիմոնյան կրթական հիմնադրամին՝ ընթացիկ տարվա համար հաշվարկված հողի հարկի չափով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Հողի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի Հալաբյան փողոցի հ.2 հասցեում Սիմոնյան կրթական հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով պատկանող՝ հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող հողամասի՝ 2015 թվականի համար հաշվարկված հողի հարկի գծով հարկային պարտավորությունները կազմում է 2 287 734 /երկու միլիոն երկու հարյուր ութսունյոթ հազար յոթ հարյուր երեսունչորս/ դրամ. որի համար Սիմոնյան կթրական հիմնադրամի գլխավոր տնօրենը դիմել է օրենքով սահմանված կարգով հողի հարկի արտոնություն ստանալու խնդրանքով, նշելով, որ հիմնադրամը, հանդիսանալով քննարկվող զբոսայգու օգտագործողը, այն պահպանում է պատշաճ վիճակում, դրա նշանակությանը համապատասխան՝ այդ նպատակով կատարելով մեծածավալ աշխատանք և ծախսեր, մինչդեռ՝ հիմնադրամը տվյալ տարածքում իրականացնում է բարեգործական կրթական ծրագիր, որը շահ ստանալու նպատակ չի հետապնդում:

Հաշվի առնելով Սիմոնյան կթրական հիմնադրամի գլխավոր տնօրենի գրությունը՝ նպատակահարմար եմ գտնում տրամադրել 2 287 734 /երկու միլիոն երկու հարյուր ութսունյոթ հազար յոթ հարյուր երեսունչորս/ դրամի չափով հողի հարկի գծով արտոնություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հողի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առընչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հողի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ